ARMECONOMBANK
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գրասենյակ
Հայաստան ՀՀ, Երևան, 0002,
Ամիրյան փող. 23/1
Հեռ.` +37410 510 910, 86 86
Ֆաքս` +37410 538 904
Էլ. փոստ.` bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Head office
23/1 Amiryan str., 0002, Yerevan
Republic of Armenia
Tel.: +37410 510 910, 86 86
Fax: +37410 538 904
E-mail: bank@aeb.am
www.aeb.am

N 38-08/195 «01» հուլիս 2026թ.

## ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/260** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության** (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **15,600,000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի կողմից **ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/260** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինացիպալի կողմից հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված **մեկ հարյուր քսան աշխատանքային օր՝ մինչև 22.01.2027թ. ներառյալ**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ irina.eghiazaryan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահի տեղակալ՝ Օնիկ Չիչյան

Գլխավոր հաշվապահ՝ Նոնա Գալստյան